




# COVID-19. փաստեր պատվաստման մասին

## Վերարտադրողականություն և դաշտանային ցիկլ



### COVID-19-Ը ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ

- **Չկա որևէ ապացույց**, որ որևէ պատվաստանյութ, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը, առաջացնում են վերարտադրողականության հետ կապված խնդիրներ կանանց կամ տղամարդկանց մոտ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատվաստված մարդկանց շրջանում հղիանալու ցուցանիշները նույնն են, ինչ չպատվաստվածների շրջանում: Չկա նաև ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ազդում են սեռական հասունացման կամ դեռահասների զարգացման վրա:
- Բժիշկ-փորձագետները հղի մարդկանց և նրանց, որոնք ցանկանում են ապագայում երեխա ունենալ **խորհուրդ են տալիս պատվաստվել COVID-19-ի դեմ:**
- Փորձագետները նաև խորհուրդ են տալիս բոլորին **ժամանակին ստանալ COVID-19-ի դեմ պահանջվող պատվաստանյութերը: Սա ներառում է թարմացված (երկվալենտ) խթանիչի դեղաչափը ստանալը՝** հիմնական շարքի կամ խթանիչ վերջին դեղաչափը ստանալուց առնվազն 2 ամիս հետո: Սա հատկապես կարևոր է այն մարդկանց համար, որոնք փորձում են հղիանալ կամ արդեն հղի են: COVID-19-ը կարող է ավելի վատ ընթացակարգ հղիության ժամանակ: Հղիության ընթացքում COVID-19-ով վարակվելը մեծացնում է հղի անձի, ինչպես նաև նրա զարգացող պտղի համար բարդությունների վտանգը:



### ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱՇՏԱՆԱՅԻՆ ՑԻԿԼԻ ՎՐԱ

- Որոշ կանայք հայտնել են COVID-19-ի դեմ պատվաստվելուց հետո իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին: Վերջին երկու ուսումնասիրությունները ցույց են տվել, որ պատվաստվելուց հետո ցիկլերի միջև ընկած ժամանակը ավելացել է միջինում մեկից քիչ օրով: Այս **փոփոխությունները եղել են ժամանակավոր**, և արյունահոսելու օրերի մեջ փոփոխություն չի եղել:
- Շատ հանգամանքներ կարող են հանգեցնել դաշտանային ցիկլերի փոփոխության, ներառյալ՝ COVID-ը: Անկանոն ցիկլերը շատ տարածված են դեռահասների շրջանում: Եթե մտահոգություններ ունեք կապված ձեր դաշտանային ցիկլի հետ, խոսեք բժշկի հետ:



Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ պատվաստումն այն մարդկանց համար, որոնք ցանկանում են երեխա ունենալ](#) կայքէջը:

### ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆ ԱՆՎՃԱՐ Է ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ, ՆՈՒՆԻՍԿ ԵՔԵ չՈՒՆԵՔ ապահովագրություն

Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին: Կան բազմաթիվ պատվաստման վայրեր, որոնք բաց են շաբաթ և կիրակի օրերին ու երեկոյան ժամերին և ժամադրություն չեն պահանջում: Ձեր թաղամասում պատվաստման վայր գտնելու համար՝

- Այցելեք [VaccinateLACounty.com](http://VaccinateLACounty.com) կայքէջ կամ զանգահարեք **1-833-540-0473** հեռախոսահամարով առավոտյան 8-ից երեկոյան 8:30-ը:
- Կարող եք նաև զանգահարել 2-1-1 համարով կամ հարցնել ձեր բժշկից կամ տեղամասային դեղատան աշխատակցից:
- Նաև հասանելի են անվճար փոխադրման և տնային պատվաստման ծառայություններ:

